Սիրելի երիտասարդ ընկերներ

Հուսով ենք, որ ձեզ դուր կգա *Ընկեր* ամսագրի այս հատուկ թողարկումը: Այն ամբողջությամբ վերաբերում է մկրտությանն ու հաստատմանը:

Եթե դուք նոր եք մկրտվել, մենք ողջունում ենք ձեզ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նոր անդամի:

Երբ մկրտվում եք, դուք հետևում եք մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի օրինակին: Դուք խոստանում եք հիշել Փրկչին և պահել Նրա պատվիրանները: Այդ խոստումները կոչվում են ուխտեր: Երբ հաստատվում եք, դուք ստանում եք Սուրբ Հոգու պարգևը: Սուրբ Հոգին կարող է մխիթարել, առաջնորդել և ոգեշնչել ձեզ ձեր ողջ կյանքի ընթացքում:

Եթե դուք արդեն մկրտվել եք, խրախուսում ենք ձեզ հիշել այն ուխտը, որը կնքել եք մկրտության ժամանակ, և ամեն օր փորձել հետևել Հիսուսին:

Եթե դեռ չեք մկրտվել, հուսով ենք դուք կպատրաստվեք՝ ավելին սովորելով այս կարևոր քայլի մասին:

Մենք մեծապես հպարտանում ենք ձեզանից յուրաքանչյուրով: Մենք գիտենք, որ Երկնային Հայրը հսկում է ձեզ: Նա ձեզ շատ է սիրում, մենք՝ նույնպես:

Առաջին Նախագահություն

Մկրտության մասին այս գրքույկի օրինակներ պատվիրելու համար տեղեկությունը տրված է դարձերեսի շապիկի վրա: